ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆՈՐԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանք ենք յղում արժանաւոր հայորդուդ՝ ազգային եւ եկեղեցական մեր կեանքում մատուցած զովելի ծառայութիւնների համար:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով քաջատեղեակ ենք Ձեր եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը: Ազնիւ յանձնառութիւններով ու ջանադրութեամբ Դուք փարիներ շարունակ աջակցում էք Տիրախնամ թեմի գործունէութեանը՝ զովարժան նպաստ բերելով Ռուսաստանում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը՝ յանուն հաւատաւոր հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքի բարօրութեան: Եկեղեցանուէր նոյն ոգով Դուք մասնակցեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը՝ սրտարուխ ընծայաբերումով ներդրում բերելով թեմական կեանքում պատմական մեծ իրագործման յաջողութեանը՝ Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ:

Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ, որ Դուք բարի ծառայութիւններ էք մատուցել նաեւ Հայրենի մեր երկրին եւ հաւատաւոր մեր ժողովրդին: Ձեր իրագործումները, արդարեւ, վկայում են Ձեր հաւատի, հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին՝ պատիւ ու յարգանք բերելով արժանաւոր հայորդուդ:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով Թեմական Առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մաղթում ենք, որ նոյն կորովով ու եռանդով շարունակէք Ձեր ազգանպաստ ու հայրենանուէր գործունէութիւնը՝ նորանոր յաջողութիւններով զարդարելով Ձեր կեանքի ընթացքը:

Աղօթում ենք, որ Ամենողորմ Տէրն Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով արեւշատ տարիներ եւ ամենայն բարիք:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ